185 միաբանեալ երդմամբ ի միասին դիմեցին ի սարայքն։ Օսմանն փախաւ Էսկի սարան. գնացին զկնի. եւ անտի Թագեաւ մօտ Ենկիչէրի աղան. անդ բոլորեցին զտունն եւ ասին. Տուր մեզ զմեր կորուսիչն, ապա թէ ոչ զքեզ կտոր
190 կտոր կ՝առնեմք։ Եւ նա վասն ահի ետ զնա ի ձեռս նոցա։ Իսկ եղկելի Օսմանն արկեալ զվզոցն մախրամայ՝ աղաչէր եւ աղերսէր լալով առ մի մի զծառայսն իւր թէ՝ Մի՛, խնայէք ինձ ծառայք իմ եւ մի սպանանէք, զի զձեզ
195 մեծի փառաց հասուցից։ Եւ նոքա պնտեալք ոչ ողորմեցան նմա բնաւ, թէ Դու չի խնայեցիր եւ ոչ լսեցիր մուֆդուն եւ ոչ մեզ. եւ ոչ մեք քեզ կ՝ողորմիմք։ Եւ բերեալ համալի ձի մի անարդ սէմէրով, հեծուցին ի վերայ. եւ
200 այնպէս չրջեցուցին ի քաղաքն. եւ տարեալ Եօթն Ղուլան՝ խեղդեցին դատն մահուամբ։ Եւ այսպէս կորաւ չարն չարաւ եւ համբարձաւ անօրէնն ի միջոյ. զի մի տեսցէ զփառս Աստուծոյ։

18. ՏԱՐԵԳՐՈՒԹԻՒՆ 1623—1635 ԱՄԱՑ

ա. ԱՊԱԶԱ ՓԱՇԱՅ. ԿՈՏՈՐԱԾ ԵՆԿԻՉԱՐԵԱՅ

Իսկ ի թվ. ՌՀԲ (1623)ին ոմն չար եւ աբենարբու, ազգաւ Ալխազից, վատ եւ ապիրատ, որ կոչէր Ապազայ, ի զաբիէն ելեալ՝ եղեւ փաշայ միաբանութեամբ Օսմանայ մօրն
5 Քօսամին եւ Ղալիլ վէզիրին եւ այլոցն. եւ հասեալ Անատոլի, զօրացեալ՝ եղեւ ջատագով

1 յարենարբու։